ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ
ՆՎԻՐՎԱԾ ԷԴՈՒԱՐԴ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. հունվարի 18-ին, ժամը 11:30-ին Հայաստանի շախմատի ակադեմիան Շախմատի ակադեմիայի ակումբի հետ համատեղ, կազմակերպում է Էդուարդ Մնացականյանի հիշատակին նվիրված կայծակնային շախմատի մրցաշար:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երկրորդ կարգ ունեցող շախմատիստները: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների: Մրցաշարում կհաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) կայծակնային վարկանիշ:

Մրցաշարի մասնակիցները պետք է պարտադիր ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/: ՖԻԴԵ-ի նույնականացման համար** չունենալու դեպքում մինչև հունվարի 16-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ **https://chessfed.am/am/fide-registration-form**:

Ժամակարգ

3 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 70%-ը:

Մրցանակներ					
Հիմնական	**I**	**II**	**III**	**IV**	**V**
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**					
Լավագույն արդյունք ցույց տված 55+ վետերան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված կարգային մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան աղջիկ մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 8 տարեկան մասնակից					
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 8 տարեկան աղջիկ մասնակից					

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2101-ից բարձր վարկանիշ ունեցող մասնակիցներ	4 500 ՀՀ դրամ
II, I կարգ և մինչ 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	5 500 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարի մասնակիցների գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով մինչև **հունվարի 16-ը, 18:00-ն**: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջի գրանցում բաժնում՝ https://chessacademy.am/payment/form/14?lang=am, անհրաժեշտ է լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 1570091773770100

ՀԻՇԵՑՈՒՄ՝ Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում **ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆՇԵԼ** մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Հեռախոսահամար՝ 010-448479, 044-998088

Գրանցումը հաստատվում է վճարումը կատարելուց հետո: